



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



ԳՐԻԳՈՐՅԱՆ

12 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 106

Ձեռնարկողը՝

<<Մերսար>> ՍՊԸ

Արագածոտնի մարզ, Արագածավան համայնք

Գործունեությունը՝

**Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ փեղամասում
2018-2020թթ. ընթացքում կատարվելիք
երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

Արագածոտնի մարզ

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿի
տնօրենի ժ/պ՝**



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԲՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 106

« 19 » 12 2018թ.

**Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասում
2018-2020 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանահետախուզական
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝ <<Մերսար>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ և կից
փաստաթղթեր /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝ Արագածոտնի մարզ, Արագածավան համայնք

Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են «Մերսար» ՍՊԸ-ի նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցների հաշվին:

Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասը գտնվում է Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում, համայնքից 7.5կմ դեպի հյուսիս-արևելք և զբաղեցնում է մոտ 5.0հա տարածք:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նախագծով նախատեսվում է ուսումնասիրել և արդյունաբերական կարգերով հաշվարկել օբսիդիանների պաշարները, որոնց որակական հատկանիշները պետք է ապահովեն «Գունավոր արհեստագործական քարեր հումքում» 41.117-76 տեխնիկական պահանջները:

Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն հորատանցքերով՝ հետախուզաառուների ու բնական մերկացումների զուգորդմամբ, նմուշարկման աշխատանքներով ու փորձնական բացահանքերի անցմամբ: Լեռնագանգվածից կրնդիցիոն հումքի ելքը ըստ տարատեսակների ու կարգերի (սորտ) կորոշվի փորձնական հանույթի արդյունքներով: Կկատարվի նաև արդյունահանված կարգային քարերի փորձնական սղոցում՝ դրանց գեղազարդային ու մշակման տեխնոլոգիական հատկությունների



ուսումնասիրման համար: Արդյունահանման թափոնները կուսումնասիրվեն որպես հղկիչ և կապակցող նյութ օգտագործելու հնարավորությունը պարզելու համար:

Տարածքի հետազոտման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնված օգտակար հանածոյի մարմինների ձևաբանությունը, տեղադրումը, դիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, հանքային մարմինների չափերը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը և այլն:

Նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 5 հա ընդհանուր տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և բնական մերկացումների գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա:

Օգտակար հանածոյի ուսումնասիրման և նմուշարկման համար ծրագրով նախատեսվում է հետախուզական խրամների և մաքրվածքների անցում, որոնք կատարվելու են մեխանիկական եղանակով և ձեռքով, առանց պայթուցիկ նյութերի օգտագործման:

Լեռնային փորվածքների ընդհանուր ծավալը կկազմի.

- հետախուզական խրամներ 2-3մ խորությամբ, ընդհանուր 500գծ.մ երկարությամբ և մոտ 1250մ³ ծավալով, խրամների լայնությունը նախատեսվում է 1մ,
- հետախուզական մաքրվածքներ, 2-4մ բարձրությամբ, ընդհանուր 150գծ.մ երկարությամբ և մոտ 1150մ³ ծավալով:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի միջոցով: Հորատումը իրականացվելու է ՈՒԳԲ-1 հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային և ավաստե թագիկներով, 112 և 93մմ տրամագծերով: Նախատեսվում է հորատել մինչև 20մ խորությամբ 6 հորատանցք 120մ ընդհանուր խորությամբ, հորատհանուկի նվազագույն ելքը 90%:

Օբսիդիանները նախատեսվում է ուսումնասիրել որպես արհեստագործական և ոսկերչական քար:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատհանուկից, հետախուզական խրամներից, մաքրվածքներից և փորձնական բացահանքերից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով հետախուզական փորվածքներից նախատեսվում է վերցնել ընդամենը 50 մենաքար:

Հորատահանուկից նախատեսվում է վերցնել 12 նմուշ:

Քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 3 նմուշ:

Օգտակար հանածոյի քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով կվերցվի 3 ապարանմուշ հղկուկ պատրաստելու համար:

Օբսիդիանի գեղագիտական-գեղարվեստական հատկությունները որոշելու համար նախատեսվում է 20 նմուշ վերցնել փորձնական բացահանքերից և 20 նմուշ ընտրել վերցված 50 մենաքարերից: Կորոշվի քարային հումքի կառուցվածքը, փայլը, ամրությունը, գունավորումը, ջարդվածքի բնույթի տեքստուրան, միկրո և մակրո արատները (ծակոտիներ, փչուկներ, չեչ, ներփակումներ) և այլն:



- Հողի հակաէրոզիոն հատկությունների բարձրացում՝ էնդեմիկ թիթեռնաձաղկավորների ու հացազգի խոտախառնուրդի ցանքի միջոցով ճիմի առաջացմամբ:

- Խախտված տարածքների լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա:

- Աշխատանքների տարածքների մեկուսացում՝ ցանկապատում՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

- Գոյություն ունեցող ճանապարհների օգտագործում:

Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

- Մթնոլորտային օդի կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, տարին երեք անգամ հաճախականությամբ:

- Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ:

- Օգտագործված մեքենայի յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հորատման հրապարակների ռեկուլտիվացիա և լանդշաֆտի վերականգնում՝ շինարարության ժամանակ հանված և կուտակված հողաբուսաշերտով: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսված է 120հազ. դրամ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ թափոնների օբյեկտի ստեղծում չի նախատեսվում: Իսկ կենցաղային աղբը տեղափոխվելու է մոտակա աղբահավաք վայր:

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Արագածավան համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծին: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրամշակման և լրակազմման, որի ընթացքում հաշվի է առնվել դիտողություններն ու առաջարկությունները:



Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
3. Ուսումնասիրության ընթացքում առաջացած աղբի (կենցաղային աղբի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել «Օրենսդրությամբ սահմանված կարգով»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մերսար>> ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Արտենիի օբսիդիանի հանքավայրի 4-րդ տեղամասում 2018-2020թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Մասնագետ



Ա. Դոնոյան

Հ. Մերոպյան